թեամբ եկիաղարու ուրումն մտին յերուսաղէմ, դրաւեցին զՏաճարն և անտի յարձակէին ստէպ այսր և անդր (68)։

Անանոս որ երբեմն քահանայապետն էր, հաւանեցոյց զժողովուրդն մերժել զնոսա զինուք. և յետ սաստիկ կռուոյ մերժեալ փակեցան իսկ 'ի ներքին կողմանս Տաճարին։ Այլ Յովհաննէս, որ 'ի Գիսկալայ Դղեկէ Գալիլեայ, ապրեալ եկեալ էր ամբոխիւ յերուսաղէմ, նենգութեամբ կեղծաւորէր որպէս թէ կամիցի երթալ խօսիլ ընդ նոսա անսալ Անանոսի, բայց արդեամբք խրատ ետ նոցա պնդել կալ հաստատուն, և զեղոմայեցիս կոչել 'ի Թիկունս։ Եկին իսկ վաղվաղակի եղոմայեցիքն 20,000 արամբ, չեթող զնոսա Անանոս մտանել 'ի քաղաքն. բայց 'ի մրրկայոյզ գիշերի միւսմ Նախանձայոյզքն գաղտ բացին նոցա զդուռն։ Այնուհետեւ միաբանեալ սոցա ընդ նոսա արարին կոտորած անհնարին 'ի մէջ հակառակորդաց իւրեանց, և անկան սրով 12,000 արք երեւելիք, յորս և Անանոս, մինչեւ զժոխել եղոմայեցւոց ընդ այն և դառնալ յետս։

Նախանձայոյզքն յետ ջնջելոյ զարսն երեւելիս՝ սկսան մոլեգնիլ 'ի վերայ անաւադացն. զմեծատունսն քան զամենեսին արժանի պատժոյ համարէին։ Բազումք 'ի Հրէից կենաց իսկ վտանգաւ անկան անձնատուր 'ի Կեսարիա ապաստանիլ 'ի Վեսպասիանոս, որ մնայր անդ. զի երկպառակութիւն Հրէից և առաջնորդաց նոցա դիւրացուսցէ նմա զյաղթութիւնն։ Քաջ էր խորհուրդն, քանզի Յովհաննէս Գիսկալացի չկամէր զայլ ոք հրամանատար առ իւր. եւ այնպէս Նախանձայոյզք բաժանեալ յերկուս և անդադար մարտ պատերազմի էր նոցա ընդ միմեանս։ Ի նմին ժամանակի կազմեցաւ գունդ արտաքոյ քաղաքին ասպատակաւորաց եւ աւազակաց եւ առաջնորդ նոցա Սիմոն ոմն անուն, որ խոստմամբ իւրով ստուարացոյց զգունդն իբրեւ 20,000 արանց։ Ընդ Սիմոնեանս միաբանեցին և յեղոմայեցւոց 25,000 այր, և միաբան պաշարեցին զերուսաղէմ։ Յայնժամ յարեան 'ի քաղաքին հակառակ բռնաւորութեանն Յովհաննու, և նա ամրացաւ 'ի բերդն Տաճարին. բայց երկնչէին թէ խնդրեսցէ նա զքէն վրիժուց. ընկալան զՍիմոն 'ի ներքս, զի պաշտպանեսցէ նոցա յիրեսաց Յովհաննու։ Եւ այսպէս յաւելու 'ի քաղաքին միւս եւս բռնաւոր